

**Տեղի ունեցավ «Դպրոցական առողջ սնունդ այսօր, վաղը՝ առողջ սերունդ» թեմայով սեմինար**

09.12.2013



Մ/թ դեկտեմբերի 6-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը մասնակցել է «Դպրոցական առողջ սնունդ այսօր, վաղը՝ առողջ սերունդ» թեմայով սեմինարին, որը տեղի է ունեցել Վայք քաղաքի «Վայք» հյուրանոցային համալիրում:

Ողջույնի խոսքով հանդես է եկել մարզպետը Էդգար Ղազարյանը: Ելույթներ են ունեցել ՀՀ ԿԳՆ, ՀՀ ՏԿՆ ներկայացուցիչները, ՄԱԿ-ի ՊՀԾ-ի համակարգող Լիանա Խառատյանը, ՌԴ ճյուղային սննդի ինստիտուտի տնօրեն Ս. Մապլվը և նույն ինստիտուտի Երևանյան գրասենյակի ղեկավար Մ. Գասպարյանը:

Կայացել է սեմինարի մասնակիցների կողմից ընդունվելիք հայտարարության տեքստի քննարկում, «Դպրոցական կաթ» փորձնական ծրագրով նախատեսվող սննդամթերքների համտեսում և ՀՀ մարզերում դպրոցական սննդի կազմակերպման վերաբերյալ ֆոտոցուցահանդեսի դիտում:

Մարզպետն ամփոփիչ խոսքում համապատասխան հանձնարարականներ է տվել դպրոցների ղեկավարներին:

Սեմինարը կազմակերպել էր ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը, ՀՀ ԿԳ նախարարությունը, ՌԴ ճյուղային սննդի ինստիտուտը, ՄԱԿ-ի Պարենի Համաշխարհային Ծրագիրը: